

ՆԱԽԻՆՆԵՐԻ ՄԱՐԿԱԿԱՆ ԳՐԱՆՈՒՄ

ՄԵԾ ՎԵՐՈՒՄԻՆԵՆ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾԸ

Յիշողութիւններ՝ իր մահուան 20 ամեակի առթիւ:

(Շարունակութիւն):

Ը.

Թիֆլիսի Ներսէսեան Հոգեւոր Դպրոցը: 1824ին էր, որ «Վրաստանու Հայոց արքեպիսկոպոսը», ինչպէս ստորագրում էր Աշտարակեցին իր կաթողիկոսանալուց յառաջ, հիմնեց իր անունը կրող այս քեմական դպրանոցը¹: Ներսէս Ե. այնչափ սիրում էր իր այս հաստատութիւնն եւ այնչափ մեծ յոյսեր էր տածում նրա կրթական արժանիքի մասին, որ իր կոնդակներում (Մկրտիչ Էմինին ուղղուած) մինչեւ անգամ համալսարան անունն էր տալիս նրան: — Թիֆլիսի ժողովուրդն էլ միշտ մեծ գուրգուրանք է ցոյց տուած այս բազմօգուտ կրթական հաստատութեան, ոչ միայն հայերն՝ այլ նոյն իսկ իրենց համաքաղաքացի վրացիք²: Թիֆլիսի բոլոր փոքր ի շատէ աչքի ընկնող հայերը, վաճառական, արհեստաւոր կամ մտաւորական, մասնակցել են դպրոցի վարչութեան կամ «Հոգաբարձութեանը» մէջ եւ սատարել նրա բարգաւաճման:

Ներսէս՝ դպրոցը կառուցել էր քաղաքի այն միակ կենդրոնում, կամ այն մասում, որ իր ժամանակ ամենախարմար տեղն է եղել, բայց այնուհետեւ հանգամանքները մեծապէս փոխուել էին. այդ տեղը դարձել էր հասարակ չուկայ. ամէն տեսակ խանութներ եւ շինութիւններ չըջապատել էին դպրոցը: Ուստի երբ 1899ին Թիֆլիսի հասարակութիւնը տօնեց նրա հիմնարկութեան

¹ «Հոգեւոր» եւ «դպրանոց» է կոչուած, ոչ թէ այն պատճառով, որ այնտեղ սովորող աշակերտները բացարձակօրէն պիտի նուիրուէին եկեղեցական ծառայութեան, այլ որովհետեւ գտնուած էր հոգեւոր իշխանութեան վարչութեան եւ հսկողութեանը տակ եւ կառավարում էր զվստաւորաբար եկեղեցական հաստիքներով: Բոլոր ուսուսակ թեմերն ունէին իրենց յատուկ այսպիսի հոգեւոր դպրանոցներն, որոնք մեծ դարձել են տուած հայ ժողովրդի ազգային կրթութեան, ինչ որ կարելի էր սպասել պետական դպրոցներից: ² Մի վրացի իշխան Օթար Ամիրխիաթի աշակերտների տարեկան հարցաքննութեան ներկայ գլուխուցումը այնքան զոհ է մնացել, որ իր մի մեծ այգին ընծայել է Ներսէսեան դպրոցին: (Աղ. Երեցեանց, Ներս. Դպրոցի Պատմութիւնը, Դժմակերպ առթիւ: Թիֆլիս 1899):

Դժմակերպ, ընդհանուր միտք եւ բաղձանք ծագեց, դպրոցն ուրիշ, աւելի յարմար տեղ եւ աւելի ընդարձակ շինութեան մէջ փոխադրելու: Դեռ եւս Խրիմեանի ժամանակ էր, որ նրա կոնդակով, 1903ին մի Յանձնաժողով ընտրուեց, որի վրայ պարտականութիւն էր դրուած ժողովրդական հանգանակութեամբ պէտք եղած գումարը ժողովելով նոր, աւելի մեծ մի շէնք կառուցանել աւելի յարմար մի վայրում: Յանձնաժողովի անդամների մէջ դրել էին նաեւ Աղեքսանդր Մանթաշեանցի անունը, յատկապէս խնդրելով որ չմերժէ մասնակցել այս ժողովարարութեան: Յանձնաժողովը երկար ժամանակ զբաղուած էր շինութեան տեղի եւ յատկապէս հարցով: Շատ կարեւոր էր մանաւանդ տեղի խնդիրն, որպէս զի ըստ այնմ կարելի լինի շինութեան յատկապէս կազմելու եւ որոշել թէ ի՞նչ գումար է պէտք: Բարեբախտաբար մի բարեպաշտ հարուստ գիւղացի կին, տիկին Կատարինէ Նազիրեան ընծայեց դպրոցին Թիֆլիսի իր հողարածինը, ձաղուրէթ կոչուած արուարձանում, բարձրաւանդակի վրայ, օդասուն եւ բնակութիւնից հեռու, որ ամէն կերպ յարմար էր ուսումնարանի համար: Այս անհրաժեշտ պէտքն հոգացուելուց յետոյ Յանձնաժողովը պիտի դիմէր ժողովրդական հանգանակութեան, շինութեան հարկաւոր գումարը հայթայթելու համար: Ամէնից յառաջ որոշուեց դիմել այն անձին, որ ոչ միայն ամէնից ունեւորն էր, այլ եւ ամէնից բարեսիրտն ու առատաձեռնը, այսինքն Աղեքսանդր Մանթաշեանցին: Մանթաշեանց այդ միջոցին գտնուած էր Պետերբուրգում, որտեղ իր գործերը կարգադրելուց յետոյ պիտի գնար Եւրոպա: Ուստի թեմական Առաջնորդ Մաթթոնեանց սրբազանը՝ Ներսիսեան դպրոցի նորընտիր տեսուչ Աւետիս Ահարոնեանին հետեւ առած անմիջապէս մեկնեցաւ մայրաքաղաք: Առաջնորդը եւ մանաւանդ ճարտարախօս վիպասանն այնպիսի հմայիչ եւ սրտաշարժ խօսքեր էին գտել մեծ վաճառականին համոզելու համար, որ Մանթաշեանց ի բնէ բարեսիրտ եւ շուտ տպաւորութիւն կըրող, սաստիկ յուզուել էր եւ աչքերը արտասուքով լցուել: «Ինչո՞ւ էք նեղութիւն կրել, անձամբ Պետերբուրգ եկել» ասում է պատգաւորներին, բաւական էր, որ ինձ գրէիք»: Եւ մեծ բարեգործը լիովին գոհացում տուեց յանուն Թիֆլիսի հասարա-

կութեան եւ հայ հոգեւոր իշխանութեան իրեն եղած դիմումին: Նա յանձն առաւ վճարել նոր դպրոցական շինութեան ամբողջ ծախսը եւ խնդրեց, որ անյապաղ պատրաստեն պէտք եղած յատկապէս եւ որոշեն ըստ այնմ նախատեսուած գումարը:

Այս անակնկալ մեծ յաջողութիւնից յետոյ Մաթթոնեանց եւ Ահարոնեան ուրախ դարձան Թիֆլիս եւ անմիջապէս Առաջնորդարանում մի բազմամարդ խորհրդակցական ժողով գումարեցին, որ տեղ մասնագէտներից, այն է ճարտարապետներից, մանկավարժներից եւ բժիշկներից բաղկացած մի Մասնաժողով ընտրուեց նոր շէնքի ծրագիրն եւ ուրուագիծը կազմելու համար այն ձեւով եւ ընդարձակութեամբ, որ գոհացում տար դպրոցի հետգհետէ աւելացող պէտքերին եւ նորագոյն պահանջներին: Մասնաժողովը երկար խորհրդակցութիւններից յետոյ կազմել էր այնպիսի յատկապէս, որով նոր շէնքը ոչ միայն իր մեծութեամբն ու տարածութեամբն, այլ նաեւ իր բազմակողմանի նորագոյն յարմարութիւններովը պատուարեր պիտի լինէր թէ՛ դպրոցի սրբազան հիմնադիրն, որի անունը պիտի շարունակէր կրել եւ թէ՛ առատաձեռն բարերարին: Երբ նոր ծրագիրը իր վերջնական ձեւն ստացաւ, արդէն 1909ին էինք հասել: Շուտով պիտի դար նորընտիր կաթողիկոսն, ուստի պատշաճ համարուեց նրա գալուն սպասել, որպէս զի նա կատարէ հիմնադրութիւնը մեծ հանդիսութեամբ:

Նոր կաթողիկոսը՝ վեհափառ Իզմիրլեանն էր, որ Մայիսին Պետերբուրգում ուսաց կայսեր Նիկոլայ Բ.ին ներկայանալուց յետոյ, Մոսկուա, Նոր Նախիջևան, Ռոստով եւ Բաքու, հայ բնակչութեան կողմից սիրալիր եւ յարգալից ընդունելութիւն գտնելով, 1909 Յունիսի 14ին եկաւ Թիֆլիս³:

Մեծ պատրաստութիւն էր տեսնուած

³ Կաթողիկոսին դիմաւորել էին երկաթուղու կայարանում՝ Փոխարքայի կողմից իր թիկնապահը հայ դեղապետ Ալեքսանդր Կապաբէկ, նահանգի Աղուաշխարհեան կողմից հայ իշխան Նիկ. Արզուման-Երկայնարազուկն, Թիֆլիս քաղաքի կողմից քաղաքապետ Աղ. Մատիսեան եւ բազմաթիւ պատգամաւորներ, որոնց մէջ էր եւ տղերս գրող իրրեւ կովկասի հայ-կաթողիկոսի ներկայացուցիչ: Աւելորդ չեմ համարում յիշել այստեղ, որ էջմիածնի պաշտօնական «Սրբատը» այս հանդիսաւոր ընդունելութիւնը նկարագրելու ժամանակ, հարկ էր համարել ամբողջապէս յառաջ բերել իմ խօսած ճառը: (Արարատ 1909, Դեկտ.):

հիմնարկութեան հանդէսի համար: Իզմիրլեան կաթողիկոս ուրախութեամբ ընդունեց հրաւերն եւ նախագահեց այս արտակարգ հանդէսին: Հրաւիրուած էին բոլոր կարեւոր պաշտօնական անձերը: Ինչպէս եւ բոլոր ազգային եւ այլ հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչները: Մեծ շուքով տեղի ունեցաւ հիմնադրութեան հանդէսը: Եկեղեցական արարողութիւնից յետոյ եւ խօսք առի եւ յանուն բարերար Աղ. Մանթաշեանցի՝ շնորհակալութիւն յայտնեցի վեհափառին եւ պայծառութիւն ու յառաջդիմութիւն մաղթեցի Ներսէսեան Հոգեւոր Դպրոցին իր նոր կառուցուելիք շինութեան մէջ: Իմ խօսքերս հայերէնից ուսերէնի թարգմանեց Թիֆլիսի քաղաքապետ Աղեքսանդր Մատիսեան, ներկայ ուս պաշտօնական անձերի համար: Այնուհետեւ Իզմիրլեան մի իմաստնալից քարոզ խօսեցաւ, որտեղ յիշեց Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսի (դպրոցի հիմնադրի) գործի մեծութիւնն, օրհնեց բարերար Մանթաշեանցին եւ վերջացրեց՝ պատշաճաւոր մաղթանք ուղղելով ուս կայսերական գերդաստանի համար:

Նոր դպրոցական շէնքի առաջին քարը դրաւ Իզմիրլեան կաթողիկոս, այնուհետեւ բոլոր պաշտօնական ներկայացուցիչները եւ ապա եւ, բարերարի փոխանորդութեամբ: Հանդէսից յետոյ վրանի տակ ընդհանուր ճաշ կար, ուր ըստ սովորութեան առաջարկուեցան կենաց բաժակներ: Կաթողիկոսը առաջարկեց կայսեր եւ ապա փոխարքայի կենաց, փոխարքայի ներկայացուցիչը կաթողիկոսի կենաց եւ ապա թեմական Առաջնորդը բարերար Աղեքսանդր Մանթաշեանցի կենաց, «որին պատասխանեց, գրում էր պաշտօնական «Արարատը»՝ Առաքել Սարուխանեան, իրրեւ ներկայացուցիչ Մանթաշեանցի, շնորհակալական խօսքերով»: Ճաշից անմիջապէս յետոյ կաթողիկոսը հեռագիր ուղարկեց Պարիզ Մանթաշեանցին, որ պատասխանել էր շատ յարգալից կերպով:

Այս հանդէսից յետոյ մեծ եռանդով յառաջ տարուեց դպրոցի շինութիւնը: Սկզբնական նախահաշուով 200.000 բուրլի էր որոշուել, բայց ի հարկէ չբաւականացաւ եւ ծախսուեց մօտ 300.000 բուրլի:

Դժբախտաբար Մանթաշեանց իր այս բարեգործութեան արդիւնքը նոյնպէս չտեսաւ: Երբ շինութիւնը վերջացաւ եւ բացուած

տեղի ունեցաւ նա արդէն դադարել էր սպարե-
լուց :

Իզմիրլեան կաթողիկոս այս հանդէսից
2 օր յետոյ մեկնեցաւ իր Աթոռատեղին :
Բայց էջմիածին չհասած նա մի մեծ ուխտ
ունէր կատարելիք եւ կատարեց : Նա այցե-
ւոյց Անի, հայ Բագրատունեաց հինաւուրց
մայրաքաղաքը, որ այդ միջոցին իր դարա-
ւոր գաղանիքն երեւան էր հանել, բազմար-
դին ահադեմիկոս Մառի անխոնջ աշխա-
տութեան շնորհիւ 4 :

4 Այնքան մեծ հետաքրքրութիւն չարժեց այն
ժամանակ այս կաթողիկոսական այցելութիւնն, որ
աւելորդ չեմ համարում զրա մասին խօսել այստեղ,
իրբեւ ահանատես :

Ես դեռ չէի տեսել Անին, ուստի շատերի նման
ես էլ շտապեցայ օգտուել այս յարմար առթից :
Կաթողիկոսը՝ նախ քան Անի երթալը, թեմա-
կան Առաջնորդի հրահրով գնացել էր Սանահնի
վանքը, եւ ճանապարհին Մանթաշեանցի նախկին ըն-
կեր Միքայէլ Արամեանցի հիւրասիրութիւնն ընդու-
նել սրա կալուածքում հին Հաղրատի մօտ : Սանահնի,
ինչպէս յայտնի է, ոչ միայն նշանաւոր հին վանատեղի
էր, այլ եւ Բագրատունի արքաների ամառանոցը, եւ
լի է ազգային յիշատակարաններով :

Ես գնացի ուղղակի Ալեքսանդրոպոլ (այժմ Ալե-
նիական) ուր ինձ միացաւ զպրոցական ընկեր-
ութեանը մատենագիր Ատրպետն եւ կառով, Արա-
զածի ստորորդ քերելով մտանք Անի : Բագրատու-
նեաց մայրաքաղաքն ուղղակի յարութիւն էր տուել :
Հազարաւոր հայ ուխտաւորներ ամէն կողմից լցրել
էին աւերակ քաղաքն եւ պատասխարելով վրանների
տակ : Ժամանակաւոր խանութներ եւ ճաշարաններ
առեւտրական կենդանութիւն էին մտցրել : Հայ բար-
բառը հայ ժողովրդական երգն ու պարը տարածուել
էին դարաւոր աւերակների վրայ : Այս աւերակների
մէջ կառուցուած նոր բնակարանն, ուր սարում էր
«Վանահայրը», կարգի էր բերուած վեհափառին եւ իր
հետեւորդներին ընդունելու համար :

Իզմիրլեան հասաւ Յունիսի 25ին : Դրսի պարսպի
առջեւ (Անին կրկին պարսիս ունի) սեղան էր
դրուած, որի շուրջը բոլորուել էին Անին կենդանաց-
նորները, ահադեմիկոս հայազէտ Ն. Մառ եւ իր ան-
խոնջ աշխատակիցները : Երկու պարսպները միա-
ցած էին մի մեծ տախտակով, որի վրայ խօշոր գրե-
քով գրուած էր «Բարի Գալուստ» : Իզմիրլեան մօտե-
ցաւ սեղանին : Մառ, որ Պետերբուրգում կայսեր եւ
Իզմիրլեանի տեսակցութեան ժամանակ թարգմանի
պաշտօն էր կատարել, փութեցել էր դալ Անի, հայոց
կաթողիկոսին պատշաճ կերպով ընդունելու համար :
Եւ նա ալ ու հայ մատոյց մի սքանչելի դրատար ճա-
ռով, որի մէջ ի մէջ այլոց ասում էր. «զկնի գրեա
թէ ինձ դարուց, յեղելոյ յառաջնոյ հայրապետական
այցելութենէ վայրիս, յսկամայս հրաւիրեմ համար-
ձակ խօսել ի դիմաց աւերակ եւ թափուր շինի» : ...
Նա վերջացնում էր այսպէս .

«... Եւ արդեամբ Անուց նիւթականի, մեռելոյ,
կեայ վերին Անի, Անի տեսականն, Անի գիտականն» :
Իրօք շատ սրտաւար չէր տեսարանը : Ինչպէս
բազմաթիւն հայազէտ յիշեցնում էր, ինձ պարերից
ի վեր Անի հայ կաթողիկոս չէր տեսել իր պարսպու-
ների մէջ, չըջապատուած իր ժողովրդով, եւ առա-
ջին անգամ Իզմիրլեան էր այս հազուադէպ պատիւր
վայելում : Սաստիկ յուզուած էր «Երկաթեայ պատ-
րիաբոր» : Այլ ու հայն ընդունելու ժամանակ, ճնայե-
լով իր բուն ջանքերին, արտաստեքի կաթիլներ
լցուել էին նրա աչքերում : Մի քանի բոսէ հարկ
եղաւ, որ նա դասէ իր յուզումն եւ սպա պատարիս-
նեց :

Հետեւեալ տարին, 1910ին ես գնացի էջ-
միածին, Իզմիրլեանին տեսնելու : Մի քանի
նպատակ միանգամայն ունէի այս ճանապար-
հորդութեան համար : Նախ՝ Մանթաշեանցի
կողմից նոր Վեհարանի շինութեան վերաբե-
րեալ բացատրութիւններ տալու եւ կաթողի-
կոսի կամքն առնելով, ըստ այնմ կարգա-
դրելու համար : Երկրորդ՝ Թիֆլիսի Ազգա-
գրական Ընկերութեան կողմից, որի գան-
ձապահն եւ Վարչութեան անդամն էի,
«պատուաւոր նախագահ» վկայականը պիտի
յանձնէի Մատթէոս Բ. կաթողիկոսին : Եր-
րորդ, որ ինձ համար առանձնապէս կարեւոր
էր, մի քանի ազգային խնդիրների մասին
նրանից զբաւոր եւ բերանացի տեղեկութիւն-
ներ էի ուզում ձեռք բերել 5 :

Կարճատեւ եղաւ ժողովրդական հայրա-
պետի կաթողիկոսութիւնը : Իզմիրլեան վախ-
ճանուեց 1910 Դեկտ. 11ին, նրաի կաթու-
ածից, 69 տարեկան : Մանթաշեանց սաստիկ
ցաւեցաւ եւ անմիջապէս խորին ցաւակցու-

«... Ես իմ ամբողջ կեանքիս մէջ կը բաղձայի
տեսնել այս աւերակները եւ տեսայ. սաստիկ ուրախ
եմ : Այս, յարգելի պրոֆէսոր, այս աւերակները, որ
կանչում են այստեղ կը յիշեցնեն հայուն՝ իր ան-
ցեալը... կը յիշեցնեն այն ժամանակները, երբ հայ
կանքը եւս կը պայծառանար՝ յաղթ եւ հոյակապ... :
Դուք Ձեր պեղումներով ի լուր աշխարհի կը յայտ-
նէք տարաբախ եւ տարազիր ժողովրդի մը անցեալ
պանծալի կեանքի պատկերը : Եարունակեցէք, ազնիւ
Մառ, Ձեր բեղմնաւոր աշխատանքը» :

Իզմիրլեան այցելեց եւ մանրամասն քննեց՝
Մառի պեղումների շնորհիւ լցու եկած հնութիւնները .
Ս. Գրիգոր լուսաւորչի եկեղեցին, Մայր Տաճարը,
Իշխանաց տունը, արքունի պալատը, Վրաց եկեղե-
ցին, Առաքելոց եկեղեցին, պանդոկներն եւ այլն : Նա
քննում էր եւ լսում Մառի եւ նրա գործակից ճարտա-
բանութեան խորամանկ բացատրութիւնները : Ատրպետ,
որ քովս կանգնած էր եւ շատ լաւ ուսումնասիրած էր
Անին, նոր մանրամասնութիւններ էր աւելացնում
ինձ համար, այդ լուսարանութիւնների վրայ :

Երկու օր մնաց Իզմիրլեան Անիում, նկարուեց
Անիի թանգարանի առջեւ, Գաղիկ Ա. Թաղաւորի ար-
ձանի հետ եւ սպա մերձակայ Ղօշավանքի էլ այցելե-
լուց յետոյ մեծ թափորով եւ 50ից աւելի կառքերի
ուղեկցութեամբ մեկնեց դէպի Ալեքսանդրոպոլ, ուր
նրան դիմաւորեց եւ ընդունեց քաղաքապետը՝ Յով-
սէփ Տիգրանեան, որ Մանթաշեանցի երկրորդ աղջ-
կան ամուսինն էր :

Ալեքսանդրոպոլում կաթողիկոսը ընդունելով
տեղւոյն հայ կաթողիկ համայնքի ներկայացուցիչներին
եւ վարդապետներին, ասաց նրանց. «Ես երբեք
խորթութիւն չեմ դրած հայրու մէջ. հայ արմատն
ձագճները բոլորեմքն եղբայրներ են» :

5 Ես այն ժամանակ գրում էի «Հայկական խնդիրն
եւ Ազգային Սահմանադրութիւնը Թիֆլիսում» աշ-
խատութիւնս (այլ. Թիֆլիս 1912) : Իզմիրլեան մեծ
մասնակցութիւն էր ունեցած թէ մէկ եւ թէ միւս
խնդրում, եւ նա մի քանի՝ անյայտ կամ քիչ ծանօթ
կէտերի մասին ինձ հետաքրքրական տեղեկութիւններ
տուաւ, ամենայն պատրաստակամութեամբ :

Իզմիրլեան սրբազանին եւ ճանաչում էի 1894ից.
երբ նա առաջին անգամ Կ. Պոլսի պատրիարք էր ըն-
տրուել :

թիւն յայտնեց հեռագրով : Այս հեռագրին
պատասխանել էր Սուրէնեանց Սրբազան, որ
մի անգամ եւս ստանձնել էր կաթողիկոսա-
կան Տեղակալի պաշտօնը, այս անգամ վեր-
ջինը լինելով 6 : Սրբազանը Միտրանութեան
չնորհակալութիւնը յայտնելուց յետոյ գրում
էր Մանթաշեանցին — «Թող գթած Տէրը այս
կորուստի փոխարէն վարձատրէ Հայ Եկեղե-
ցին եւ ժողովուրդը՝ անասան պահելով
Սուրբ Աթոռը եւ Եկեղեցին, որոնց Բարե-
կարգութիւնը Ձեր գլխաւոր հոգածութիւն-
ներից մէկն է» :

Պարիզի հայ եկեղեցին : Մանթաշեանց
շատ էր սիրում Պարիզն եւ անուշաղն տարին
4 ամիս սպրում էր այնտեղ : Նա նախ պան-
դոկումն էր բնակում, բայց վերջին տարի-
ները մշտական բնակարան էր վարձել Ave-
nue des Champs Elyséesի վրայ : Նա եկեղեցա-
սէր էր եւ եթէ ուրիշ անհրաժեշտ գործ չու-
նէր, ամէն կիրակի գնում էր պատարագ
տեսնելու : Իր ժամանակ Պարիզի հայ գա-
ղութը դեռ իր սեպհական եկեղեցին չունէր :
Rue de Vienne փողոցի վրայ մի անշուք սրահ
կար, որ Փրանսացի բողոքականաց մատուռ
էր եւ կիրակի օրերը հայոց տրամադրութեան
տակ էր դրոււմ, այն պայմանով, որ հայ քա-
հանան մինչեւ ժամը 11^{1/2}, պատարագը վեր-
ջացնելով իր սկիհը, հանդերձը եւ խորանի
զարդարանքը դնէ սնտուկի մէջ, որովհետեւ
ճիշդ 11^{1/2}ին բողոքական պատուելին պիտի
սկսէր իր քարոզը : — 1901ին ամառուան մի
կիրակի, Մանթաշեանց գալիս է մատուռ,
բայց ուշացած է լինում եւ հայկական պաշ-
տամունքի ժամն անցած : Այս հանգամանքը
ցաւ է պատճառում եւ նա սյգտեղ յղանում
է յատուկ հայկական մատուռ շինելու գա-
ղափարը : Նա դիմում է հայ քահանային, որ
յետոյ պիտի լինէր Պարիզի Առաջնորդը,
Վառձապուհ կալիսկ. Բիւրարեան եւ յայտ-
նում իր մտադրութիւնը : Բայց սկզբնապէս
միայն մատուռ հաստատելու գաղափարը նրա
մէջ հետզհետէ զարգանալով՝ յանգում է Պա-

րիզի հայ գաղութին պատշաճ հայկական
եկեղեցի կառուցանելու որոշման : Այդ նպա-
տակի իրագործման համար նա յանձնարա-
րում է հայր Բիւրարեանին եւ իր ծանօթնե-
րին յարմար տեղ գտնել Պարիզի կենդրոնա-
վայրում : Իրեն առաջարկուած գնապան հո-
ղերից, նա կանգ է առնում ամէնից սուղի,
բայց եւ ամէնից կենդրոն, ամէնից յարմարի
վրայ, հռչակաւոր Champs Elyséesի չըջանում,
Jean Goujon փողոցի վրայ : Մանթաշեանց
կամենում էր, որ իր շինելիք եկեղեցին հայ
ճարտարապետական ձեւով կառուցուի եւ
միանգամայն յարմար այն ճոխ թաղին, ուր
նա պիտի բարձրացնէր հայկական խաչը :
Գաղղիացի ճարտարապետն, որին յանձնուած
էր այս գործը, բոլորովին անծանօթ հայ-
կական ոճին, երկար ատեն տատանում,
դժուարանում էր եւ չէր կարողանում մի
յարմար յատակադիւծ ստեղծել : Մանթա-
շեանց Թիֆլիսում ժողովել տուաւ յայտնի
հայ եկեղեցիների պատկերներն եւ այդ հա-
ւաքածոն ուղարկեց Պարիս, ճարտարապե-
տին, որ դրանով առաջնորդուի : Գաղղիա-
ցին չափազանց ուրախացած էր եւ պատաս-
խանեց. «այժմ միայն ես հասկանում եմ
թէ ի՞նչ է հայկական ոճն եւ ձեզ կը դոհաց-
նեմ» : Եւ նա քիչ յետոյ ուղարկել էր Թիֆ-
լիս իր կազմած յատակադիւծը : Մանթաշեանց
շատ դոհ մնաց. բայց սպասով լինելու հա-
մար, ցոյց տուեց իր ծանօթ հայ եւ ոռւս
ճարտարապետներին, որոնք միաբերան գո-
վեցին : Այլ եւս արդելք չէր մնում. եւ 1902
Յուլիս 4ին, եկեղեցու տեղի վրայ առաջին
բրիչի հարուածը տրուեց, իսկ Հոկտեմբերի
5ին կատարուեց շինութեան հիմքի օծումը :
Ճիշդ երկու տարի յետոյ, այն է 1904 Հոկ-
տեմբերի 2ին, վարադայ Ս. Սաչի բարե-
կենդանի օրը, Եւրոպայի Հայոց Առաջնորդ
Գէորգ արքեպ. Իւթիւճեան օծեց նորաշէն
հայ եկեղեցին յանուն Ս. Յովհ. Մկրտչի, ի
յիշատակ բարերարի հօր, Յովհաննէս Ման-
թաշեանցի 7 :

6 Ինչպէս յայտնի է, մի տարի վերջը (1911)
կայացած Համազգային Ընտրողական Ժողովը, որ 80
հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորներից
էր բաղկացած, 89 ձայնի իրաւունքով, գաղանի քուէ-
արկութեամբ, երկու թեկնածու էր ընտրել .

1. Գէորգ արքեպ. Սուրէնեանց եւ
2. Եղիշ արքեպ. Դուրեան :

Նիկոլա Բ. կայսրը՝ Կոնկասի Փոխարքայ կոմս
Վորոնցով-Դաշկովի կարծիքն ընդունելով կաթո-
ղիկոսական պաշտօնի համար հաստատեց Սուրէնեան-
ցին, 1912 Մարտին :

7 Վառձապուհ սրբազան ինձ պատմել է թէ
եկեղեցու օծման հետեւեալ կերակին երբ ինք, դեռ
եւս աւագ քահանայ, պատարագ էր մատուցանում,
առաջին կարգի վրայ նստած էին Մանթաշեանց մի
քանի ուրիշ նշանաւոր ուսուցիչների հետ միասին,
ինչպէս Կարապետ Եղեանց, Միք. Արամեանց, Մա-
կուացի սեղանաւոր ժամհարեան, եւ պատարագ էին
տեսնում : Պատարագիչ քահանան կարգում է օրուան
Աւետարանն, որ զարմանալի գուգադիպութեամբ ա-
սում էր թէ որքան դժուար էր մեծատունին ար-
խայութիւն մտնելը... : Մանթաշեանց պատարագից

Եկեղեցու հետ միասին Մանթաշեանց շինեց նաև նրան կից Առաջնորդարանի շէնքը:

Մանթաշեանց Պարիզի եկեղեցու վրայ ծախած է 1,100,000 Փրանք, ընդ ամէնը, որից 450,000 Փր. վճարուած է միայն հողի համար: Շատերը գտնում էին այն ժամանակ թէ կարելի էր աւելի ընդարձակ գետին ձեռք բերել Պարիզում, այդ գնով եւ աւելի յարմար տեղ հայ եկեղեցու համար, բայց Մանթաշեանց կամեցել էր, որ հայ խաչն ու ճարտարապետական ոճը փայլի մայրաքաղաքի ամենաճոխ եւ ամենաթանգ վայրում եւ բոլորը խոնարհուել էին նրա այս բողոքներին առջեւ, որ անշուշտ ունէր իր արդարանալի կողմը:

Պարիզի հայ եկեղեցին արձանագրուած է քաղաքում իբրև Աղ. Մանթաշեանցի անձնական սեպհականութիւնը: Մանթաշեանց իր կենդանութեան ժամանակ մտածել էր թէ ինչ միջոցների պէտք էր գիմել, որպէս զի իր հիմնած ազգային տաճարը մահիցը վերջ Ազգի կամ Հայ եկեղեցու անուան փոխանցուի: Նա այս մասին նոյն իսկ Օրմանեան պատրիարքի խորհուրդն էր հարցրել եւ Օրմանեան զբաղուել է այս խնդրով, առանց որ եւ է եզրակացութեան գալու:

Այնուհետեւ այս մասին որ եւ է լուրջ ձեռնարկ չէ եղած, մանաւանդ որ փոխանցումը մեծ ծախքի էր կարօտ: Այսպէս թէ այնպէս Փրանսական օրէնքի առջեւ եկեղեցին մնում է դեռ Մանթաշեանցի անուան, որ նշանակում է նրա ժառանգների սեպհականութիւնը, անուանապէս:

(Շարտանակելի:)

ՍԱՐՈՒՅԵՆ



յետոյ կատակի ձեւով նկատում է թէ արդեօք «տէր-տէրն» այդ օրն ուրիշ բան չէր կարող կարգաւ Աւետարանից, որ ակնաբերութիւն չի ունէր հարուստներին»:

ՍՏԵՓԱՆ ԷԼՄԱՍ

Ստեփան էլմաս մին է այն մեծ հայերէն, որոնք հայ ազգին ստեղծագործող հանճարին ներկայացուցիչներն են օտար ազգերու քով:

Իբրև տաղանդաւոր երաժիշտ՝ ունի այնպիսի արժէքաւոր երկեր, որոնք կրնան իրաւամբ մեծ վարպետներու արտադրութիւններուն կից յիշատակուիլ:

Ուրախութիւնն ունիմ ներկայացնելու հոս հայ տաղանդաւոր երաժիշտիս համառօտ կենսագրութիւնը, որուն կարեւոր կէտերը կը պարտիմ A. Rapinի ազնուութեան, որ երաժիշտին կեանքը մօտէն ճանչցող մըն է:

Ստեփան էլմասեան աշխարհի լոյսը տեսաւ Չմիւռնիայի մէջ, 25 Դեկտեմբեր 1864ին: Ան անուանի եւ շատ յարգուած ընտանիքի մը շտաւելոյն է: Մանուկ հասակէն սկսեալ անօրինակ ուշիմութիւն մը ցոյց տուաւ, եւ հակադրաբար յառաջադիմեց իր ուսումներուն մէջ:

Մատաղագոյն հասակին իսկ իր մէջ բերում կար դէպի երաժշտութիւն: Կը պատմեն, թէ տակաւին ութ ամսական էր, երբ լսելով դաշնակի նուագը կը բարձրացնէր գլուխը դայեակի ծոցէն, ունկնդրելու համար նուագի զուարթ խաղերուն: Հաղիւ կեանքի վեցերորդ զարուճը կոխած՝ կը սկսի արդէն դաշնակի դասեր առնել: Քանի մը տարի յետոյ վարպետը մանուկ էլմասի հօրը կը ներկայանայ, յայտարարելու թէ ինքը չունի իւր աշակերտին սորվեցնելու նոր բան մը, որովհետեւ անիկա իւրացուցած է արդէն իր բոլոր դիտցածները:

Դեռ 13 տարեկան էր, երբ Չմիւռնիայի մէջ կը մասնակցի համերգի մը, արուած բարեգործական նպատակի համար, ուր Lisztի մէկ ռապսոդիան կը նուագէ, ներկաներու վրայ անսահման խանդավառութիւն մը յառաջ բերելով: Lisztի, այդ հոյակապ վարպետի, գործերէն հմայուած մոգուած էր պատանի էլմասեան. անոնք իր յաճախակի ուսումնասիրութիւններուն առարկայ կ'ըլլային, գործնք կը ներկայացնէր դաշնակի վրայ նորանշան դիւրութեամբ եւ ոգեւորութեամբ:

Հակառակ երաժշտութեան մէջ երեւան բերած այս ընդունակութեան, կ'որոշէ Հայրը, որ պատանին վաճառականական ասպարէզին նուիրուի: Բայց անիկա չհրաժարեցաւ իւր բնածին կոչումէն. շարունակեց հետեւի իր

արտի բերումին: Կրնա՞յ ջուրը հոսանքին հակառակ ուղղութեան ընթանալ:

Ստ. էլմասի հօրեղբայրներէն մին, լուսամիտ անձ մը, որ հիացող մըն էր պատանւոյն ընդունակութիւններուն վրայ եւ կը գուրգուրար անոր տաղանդին վրայ, միջամտեց իր եղբոր քով. եւ խրախոյս կարգաց պատանւոյն՝ յարգել երաժշտական կոչումը:

Հօրեղբայրը դեռ աւելի յառաջադէմ քայլ մ'առնելով՝ իրագործեց Ստեփանի ամենալերամ փափագը՝ տեսնել Լիստը եւ ծանօթանալ անոր հետ: 1879 յուլիսին հասան Վայմար եւ ներկայացան մեծահամբաւ Վարպետին: Լիստ վերահասու եղաւ շուտով պատանւոյն քանքարին եւ քաջալերեց զանիկա:

Վիեննայի մէջ յառաջ տարաւ էլմասեան իր սիրական ուսումները: Իր դաշնակի վարպետն էր Anton Door, իսկ երգայարգարութեան առաջնորդը Franz Krenn: Իր յառաջադիմութիւնը մեծաքայլ


էր: Որովհետեւ շափազանց զգայուն էր իր ընդունակը, չկրցաւ տակալ այն տարեւոր անդուլ տքնութիւններուն, զորոնք կը պահանջէր ուսումը. Ստեփանի ստողջութիւնը քայքայեցաւ. ստիպուեցաւ բժիշկներու խորհրդով Չմիւռնիա վերադառնալ: Ո՞րքան ցաւ պատճառեց իրեն ուսումներէն բաժնուիլը: Բայց արեւելքի արեւն եւ ընտանեկան միջավայր կազդուրեցին շուտով իր տկար ոյժերը, այնպէս որ քանի մ'ամիս ետքը Վիեննա վերադառնալու ուրախութիւնն ունեցաւ:

Այս երաժշտասէր Ոստանն իր զարգացման վրայ շատ աւելի ազդեց, քան իր ուսու-

ցիչներու խորհուրդները: Երիտասարդ երաժշտագէտը այն աստիճան յառաջադիմած էր իւր ճիւղին մէջ, որ այլ եւս չէր շահագրգռուէր դասախօսութիւններէն. մասնաւորապէս դժպիտ էր իրեն A. Door:

1882ին Ստեփան էլմաս շարադրեց իր անդրանիկ գործը՝ Six Etudes. Լիստի նուիրեց դայն: Յաջորդ տարին մեկնեցաւ Վայմար, լսելու Լիստի խորհուրդները: Նոյն տարին հանեց հրապարակ Poèmes կոչուած նուագները եւ V. Hugoի ձօնեց, որուն հիացողներէն էր:

Հօրը հիւանդութեան անստոյգ վիճակը հարկադրեց զինքը միւսանգամ Չմիւռնիա երթալ, ուր իր հօրեղբայրը, եւ քիչ յետոյ նաեւ հայրը կորսնցընելու դառն վիշտըն ունեցաւ: Պարագանքը զինքը ընտանեկան հոգերուն կապեցին: Էլմաս օրինակելի կերպով կատարեց իր այդ նուիրական պարտականութիւնները:



ՍՏԵՓԱՆ ԷԼՄԱՍ

Ժամանակ մը յետոյ Ստեփան իր սիրական դրաղուններուն վերադարձաւ: Իր լուսագոյն ստեղծագործութիւնները այս շրջանէն կը սկսին: Բայց նորանոր վշտեր պատճառ եղան դարձեալ ընդհատելու աշխատանքները. վախճանեցաւ իր մօրաբոյրը, որ իր մատաղ հասակին կորսնցուցած մօր փոխարէն մայր եղած էր իրեն. քիչ ետքը մեռաւ նաեւ խորթ մայրը: Այս բարոյական հարուածներու պատճառով վշտին ներքեւ՝ իր զգայնութիւնն աւելի երեւան եկաւ. եւ արտադրութիւններն ա՛լ աւելի ձգիչ դարձան: Հանգամանքները կը ստիպէին զինքը դեռ Չմիւռնիա մնալ: Արեւու, բոյրերու եւ